*Աշխատակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվել են ԲՇԽ-ի կողմից 2023 թվականի հունիսի 29-ին*

# Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության» (այսուհետ՝ ՀՀ ԱՃԹՆ) բազմաշահառու խմբի (այսուհետ՝ ԲՇԽ) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. ԲՇԽ-ն գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԱՃԹՆ-ի ստանդարտի և սույն աշխատակարգի հիման վրա:

3. ԲՇԽ-ի գործունեության սկզբունքներն են՝ անկախությունը, օրինականությունը, հրապարակայնությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը և ղեկավարման կոլեգիալությունը:

4. ԲՇԽ-ի անդամները ԱՃԹՆ-ի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

5. ԲՇԽ-ի անդամները պետք է ունենան կարողություններ՝ իրականացնելու իրենց պարտականությունները:

6. ԲՇԽ-ի անդամները հաշվետու են հասարակության առջև և պատասխանատու են լիարժեք, արժանահավատ, պատեհաժամ տեղեկություն տրամադրելու համար:

7. ԲՇԽ-ն պատասխանատու է՝

1) ԱՃԹՆ-ի գործընթացի կառավարման համար՝ ԱՃԹՆ-ի ստանդարտով և սույն աշխատակարգով սահմանված գործառույթների պատշաճ և ժամանակին

իրականացման միջոցով, որի առաջնային նպատակն է ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի լիարժեք իրականացումը.

2) ԱՃԹՆ-ի գործընթացի ուղղորդման, ներդրման, մոնիթորինգի, գնահատման և զարգացմանն ուղղված որոշումների կայացման համար և պետք է ապահովի, որ ՀՀ ԱՃԹՆ-ն նպաստի արդյունահանող ոլորտում իրազեկ հանրային երկխոսության կայացմանը.

3) ԱՃԹՆ-ի ներդրման և կառավարման գործընթացում հասարակության տարբեր շերտերի տեսակետները և շահերը հավասարապես ներկայացնելու համար.

4) թափանցիկության ապահովման նպատակով արդյունահանող ճյուղերի գործունեությունը կարգավորող իրավական դաշտը բարելավելու գործընթացին օժանդակելու համար:

8. ԲՇԽ-ի գործունեության նպատակն է՝

1) ապահովել նորարարական և արդյունավետ եղանակներով ԱՃԹՆ-ի ստանդարտի լիարժեք ներդնումը Հայաստանի Հանրապետությունում՝ ԱՃԹՆ-ի սկզբունքներին և աշխատանքային ծրագրով ամրագրված՝ Հայաստանի առաջնահերթություններին համապատասխան՝ սույնով ամրապնդելով տնտեսության արդյունահանող ճյուղի թափանցիկությունը և խթանելով երկխոսությունը կառավարության, տնտեսության մասնավոր հատվածի և հասարակության միջև.

2) մշակել և ներդնել արդյունահանող կազմակերպությունների կողմից պետական և համայնքների բյուջեներ վճարվող տուրքերի և արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարվող եկամուտների (հարկեր, ռոյալթիներ և բնապահպանական վճարներ) վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության մեխանիզմ.

3) Բազմաշահառու խմբում վստահության և հավասարության հիման վրա կառուցողական համագործակցությամբ հաջողության հասնել ՀՀ ԱՃԹՆ-ի համատեղ կառավարման գործում:

## II. ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Սույն աշխատակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ԱՃԹՆ-ին թեկնածության հայտ՝** երկրի՝ ԱՃԹՆ ստանդարտը ներդնելու համար ԱՃԹՆ-ի խորհրդին ներկայացվող հայտը.

2) **անկախ ադմինիստրատոր՝** կազմակեպություն, որը, համաձայն ԲՇԽ-ի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի, կազմում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի զեկույցը.

3) **ԱՃԹՆ-ի խորհուրդ՝** ԱՃԹՆ-ի ասոցիացիայի գործադիր մարմինը.

4) **ԱՃԹՆ-ի զեկույց՝** ԱՃԹՆ ստանդարտը ներդնող երկրի կողմից ներկայացվող զեկույց, որը պետք է համապատասխանի ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված ԱՃԹՆ-ի պահանջներին:

5) **ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարություն՝** Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո փորձագետների խումբ, որը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացի վարչարարությունը.

6) **փորձագետ՝** Հայաստանի Հանրապետութան ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից քննարկվող հարցի վերաբերյալ փորձագիտական կարողություններ ունեցող մասնագետ, որը վճարովի կամ հասարակական հիմունքներով կարող է ընդգրկվել Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման գործընթացի աշխատանքներին.

7) **դիտորդ՝** Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, արդյունահանող ոլորտի կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, գիտական ոլորտի, միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչ, ով առանց քվեարկելու մասնակցում է ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստին.

8) **միջնորդ՝** ԲՇԽ-ի խմբակցությունների կողմից ներկայացված և ԲՇԽ-ի անդամների ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) ընտրված՝ վստահություն վայելող անձ.

9) **խմբակցություն՝** ԲՇԽ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածը կամ քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամների խումբը.

10) **խոսնակ՝** ԲՇԽ-ի անդամ, ով սահմանված դեպքերում հանդես է գալիս ԲՇԽ-ի՝ իր խմբակցության անդամների անունից, հավաքագրում է իր խմբակցությունը ներկայացնող անդամների կարծիքը, ապահովում է խմբակցության կապը.

11) **այլընտրանքային անդամ՝** ԲՇԽ-ի խմբակցությունների կողմից սահմանված կարգով ընտրված անձ, որը սույն աշխատակարգով սահմանված կարգով կարող է փոխարինել ԲՇԽ-ի համապատասխան խմբակցության անդամին.

12) **տարեկան հաշվետվություն՝** ԲՇԽ-ի գործունեության տարեկան հաշվետվությունը, որը կազմվում և հաստատվում է ԲՇԽ-ի կողմից մինչև հաջող տարվա հուլիսի 1-ը և ներկայացնում է ԲՇԽ-ի կողմից տարվա ընթացքում

Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրումը ապահովող աշխատանքների վերաբերյալ տեղեկություն:

## III. ԲՇԽ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. ԲՇԽ-ն՝

1) մշակում և հաստատում է ԲՇԽ-ի աշխատակարգը.

2) կազմում և հաստատում է ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիրը, որը պետք է պարունակի չափելի թիրախներ և իրականացման ժամանակացույց, ինչպես նաև առկա ֆինանսական, տեխնիկական և օրենսդրական սահմանափակումների գնահատականը.

3) քննարկում է ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի մոնիթորինգի և գնահատման արդյունքները և, անհրաժեշտության դեպքում, կատարում է փոփոխություններ աշխատանքային ծրագրում.

4) կազմում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտը.

5) աջակցում է անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի կազմման աշխատանքներին և հաստատում է տեխնիկական առաջադրանքը.

6) սահմանում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ձևաչափը և ընդգրկման շրջանակը.

7) վերահսկում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացը և աջակցում է վավերացման աշխատանքներին.

8) հաստատում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի հաշվետվությունները.

9) կազմում է ԲՇԽ-ի գործունեության տարեկան հաշվետվությունները.

10) մշակում և աջակցում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի գործընթացի հանրային իրազեկման, հաղորդակցման և հանրային քննարկումների խթանման ռազմավարության իրականացմանը, այդ թվում ԱՃԹՆ-ի գործընթացի ընթացքում կազմած հաշվետվությունների և նյութերի՝ հասարակության լայն շերտերի համար առավել մատչելի տարբերակների հանրայնացմանը.

11) ԱՃԹՆ-ի գործընթացում համագործակցում է միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետութան պետական գերատեսչությունների, քաղաքացիական հասարակության, այդ թվում, ազդակիր համայնքների ներկայացուցիչների, հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի կազմակերպությունների հետ, այդ թվում՝ համակարգված հանդիպումների միջոցով:

## IV. ԲՇԽ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

11. Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ն բաղկացած է Հայաստանի Հանրապետության կառավարության, հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի և քաղաքացիական հասարակության խմբակցությունների տասնհինգ անդամներից՝ հետևյալ կառուցվածքով.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության վեց ներկայացուցիչ.

2) հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի չորս ներկայացուցիչ.

3) քաղաքացիական հասարակության հինգ ներկայացուցիչ, որից մեկը՝ գիտության ոլորտի ներկայացուցիչ:

12. Հայաստանի Հանրապետության կառավարության, հանքարդյունաբերության ոլորտի գործարար հատվածի և քաղաքացիական հասարակության խմբակցություններն իրենց կողմից սահմանված կարգով ընտրում և առաջադրում են ԲՇԽ-ի՝ իրենց խմբակցությունը ներկայացնող անդամների և այլընտրանքային անդամների թեկնածուներին:

13. ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցություն պետք է ունենա առնվազն մեկ այլընտրանքային անդամ, սակայն ոչ ավել քան խմբակցության անդամների թիվը:

14. ԲՇԽ-ի անդամները և այլընտրանքային անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով: ԲՇԽ-ի անդամի լիազորությունների ժամկետը հաշվարկվում է սկսած համապատասխան խմբակցության կողմից նրան որպես ԲՇԽ-ի անդամ կամ այլընտրանքային անդամ առաջադրելու օրվանից: 3 տարին հաշվարկվում է անդամի՝ անկախ հաջորդականությունից առանց ընդմիջման ԲՇԽ-ի անդամ և այլընտրանքային անդամ լինելու ժամկետների գումարով: Համապատասխան խմբակցությունների կողմից ԲՇԽ-ի անդամին (անդամներին) կամ այլընտրանքային անդամին (անդամներին) առաջադրելուց հետո Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ ԲՇԽ-ի անհատական կազմը հաստատվում է նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

15. ԲՇԽ-ի անդամի և այլընտրանքային անդամի լիազորության ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ համապատասխան խմբակցությունը ներկայացնում է ԲՇԽ-ի տվյալ անդամին փոխարինող հաջորդ անդամի կամ նույն անդամի թեկնածությունը:

16. ԲՇԽ-ի նախագահը (այսուհետ՝ նախագահ) ՀՀ փոխվարչապետն է:

17. ԲՇԽ-ն կարող է ընտրել ԲՇԽ-ի փոխնախագահ: Նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է փոխնախագահը կամ, եթե ԲՇԽ-

ն չի ընտրել փոխնախագահ, ԲՇԽ-ի նախագահի առաջադրմամբ ԲՇԽ-ի ՀՀ կառավարության խմբակցության անդամներից մեկը:

18. ԲՇԽ-ի երեք խմբակցությունները կարող են առաջադրել իրենց խմբակցությունների խոսնակներին:

19. Նախագահը՝

1) կազմակերպում է ԲՇԽ-ի աշխատանքը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման գործընթացը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ին թեկնածության, այնուհետև՝ համապատասխանության ապահովման համար ձեռնարկված քայլերի և ստացված արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն.

3) հրավիրում և վարում է ԲՇԽ-ի նիստերը կամ նիստերի վարումը լիազորում է ԲՇԽ-ի փոխնախագահին կամ անդամներից մեկին.

4) առաջադրում է ԲՇԽ-ի նիստի օրակարգը.

5) ԱՃԹՆ-ի շրջանակներում միջազգային հարթակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը կամ սույն գործառույթը լիազորում է այլ անձի:

20. ԲՇԽ-ի անդամը՝

1) մասնակցում է ԲՇԽ-ի նիստերին.

2) ներկայացնում է առաջարկություններ ԲՇԽ-ի նիստերի օրակարգի հարցերի, ինչպես նաև ԲՇԽ-ի կողմից քննարկվող այլ հարցերի վերաբերյալ.

3) իրականացնում է ԲՇԽ-ի որոշումներից և սույն աշխատակարգով սահմանված ԲՇԽ-ի լիազորություններից բխող այլ գործառույթներ:

21. ԲՇԽ-ի այլընտրանքային անդամը՝

1) մասնակցում է ԲՇԽ-ի նիստերին առանց ձայնի (քվեարկելու) իրավունքի.

2) սույն աշխատակարգով սահմանված կարգով՝ խմբակցության անդամի բացակայության դեպքում փոխարինում է տվյալ անդամին:

22. ԲՇԽ-ի անդամի անդամությունը դադարեցվում է՝

1) ԲՇԽ-ի անդամի դիմումի հիման վրա.

2) լիազորությունների ժամկետն ավարտվելու դեպքում.

3) խմբակցությունների կողմից սահմանված՝ ԲՇԽ-ի անդամին առաջադրվող պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ նոր փաստերի առկայության դեպքում.

4) խմբակցությունների կողմից ԲՇԽ-ի համապատասխան խմբակցության անդամին ետ կանչելու և նոր անդամի թեկնածություն ներկայացնելու դեպքում.

5) սույն աշխատակարգով սահմանված այլ դեպքերում:

23. Իր լիազորության ժամկետի ավարտից շուտ հրաժարականի դեպքում՝ ԲՇԽ-ի անդամն հնարավորության դեպքում այդ մասին պետք է ծանուցի նախագահին առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

24. ԲՇԽ-ի անդամի լիազորությունների ժամկետի ավարտից շուտ դադարեցման դեպքում՝ համապատասխան խմբակցության առաջադրմամբ այլընտրանքային անդամներից նշանակվում է ԲՇԽ-ի ժամանակավոր անդամ, որից հետո առնվազն երկու ամսվա ընթացքում ներկայացվում է հիմնական նոր անդամի թեկնածությունը:

25. Առանձին խնդիրների լուծման, հարցերի քննարկման նպատակով ԲՇԽ-ն կարող է կազմավորել աշխատանքային խմբեր: Աշխատանքային խմբում պետք է ներկայացված լինի ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցությունից առնվազն մեկ անդամ: Աշխատանքային խմբերում կարող են ընդգրկվել նաև փորձագետներ:

26. ԲՇԽ-ն սահմանում է փորձագետների ընտրության կարգը, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող չափանիշները:

27. ԲՇԽ-ի կողմից սահմանված կարգով և չափանիշներին համապատասխան՝ փորձագետների ընտրության մրցույթն անցկացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը, եթե փորձագետների վարձատրությունն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Այն դեպքում, երբ փորձագետների վարձատրությունն իրականացվում է դոնոր կազմակերպությունների կողմից, փորձագետների ընտրությունն իրականացվում է վերջիններիս հետ համաձայնեցված կարգով:

## V. ԲՇԽ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

28. ԲՇԽ-ի գործունեության վարչարարությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներքո գործող ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության կողմից:

29. ԲՇԽ-ի աշխատանքների հետ կապված ծանուցումները և տեղեկատվության փոխանակումը կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ ԲՇԽ-ի անդամների կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեներով:

30. ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության փորձագետները իրենց աշխատանքային պարտականություններն իրականացնելիս պետք է.

1) խորհրդակցեն նախագահի, փոխնախագահի, խմբակցությունների խոսնակների և ԲՇԽ-ի այլ անդամների հետ.

2) հավասարապես հասանելի լինեն բոլոր խմբակցությունի համար.

3) առանց ձայնի իրավունքի մասնակցեն ԲՇԽ-ի նիստերին.

4) իրականացնեն ԲՇԽ-ի կազմակերպատեխնիկական աշխատանքները, մասնավորապես՝ նիստերի նախապատրաստման, նիստերի արձանագրման, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ հաղորդակցման և ԲՇԽ-ի գործունեության հետ կապված այլ աշխատանքները.

5) ապահովեն ԲՇԽ-ի անդամների և փորձագետների կապը ոլորտային պետական լիազոր մարմինների պատասխանատուների հետ.

6) կազմակերպեն և անցկացնեն ԲՇԽ-ի նպատակների և աշխատանքային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումներ:

## VI. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-Ի ՆԻՍՏԵՐԸ

31. ԲՇԽ-ի նիստերը պետք է կայանան առնվազն տարին 3 անգամ: Անհրաժեշտության դեպքում՝ աշխատակարգով սահմանված կարգով, կարող են գումարվել արտահերթ նիստեր:

32. Նախագահը սահմանում է ԲՇԽ-ի նիստերի անցկացման օրը և վայրը և, ԲՇԽ-ի անդամների հետ խորհրդակցելով, նիստի օրակարգը: Օրակարգը և դրան համապատասխան փաստաթղթերը շրջանառվում են ԲՇԽ-ի անդամների միջև նիստից առնվազն 7 աշխատանքային օր առաջ: Որոշ դեպքերում, մասնավորապես, ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի հաստատման, ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրում փոփոխություններ կատարելու, ԱՃԹՆ-ի զեկույցի հաստատման, ԲՇԽ-ի տարեկան հաշվետվության հաստատման հարցերով փաստաթղթերը շրջանառվում են նիստից առնվազն 15 աշխատանքային օր առաջ: Ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ ԲՇԽ-ի խմբակցությունները ներկայացնում են իրենց առարկություններն ու առաջարկությունները նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ:

33. ԲՇԽ-ի նիստերը վարում է նախագահը: Նախագահը կարող է առաջադրել ԲՇԽ-ի նիստը վարող:

34. ԲՇԽ-ի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ԲՇԽ-ի կամ ԲՇԽ-ի անդամներին փոխարինող այլընտրանքային անդամների 2/3-ը և յուրաքանչյուր խմբակցության անդամների կեսից ավելին: Նիստին սահմանված քանակից պակաս անդամների մասնակցության դեպքում՝ ԲՇԽ-ի նիստի ժամանակ քննարկվում են օրակարգի հարցերը, սակայն դրանց վերաբերյալ որոշում չի կայացվում: Քվորումի բացակայության դեպքում անհարժեշտության դեպքում ԲՇԽ-ն կարող է մեկամսյա ժամկետում հրավիրել ԲՇԽ-ի նույն օրակարգով նիստ:

35. ԲՇԽ-ի անդամները պետք է անձամբ ներկայանան նիստերին: Տեխնիկական հնարավորության դեպքում և նախագահի համաձայնությամբ՝ ԲՇԽ-ի անդամները նիստերին կարող են մասնակցել տեսակապի կամ կոնֆերանս զանգի միջոցով:

36. Առանձին դեպքերում՝ ԲՇԽ-ի անդամների ընդհանուր համաձայնությամբ՝ որոշումները կարող են կայացվել առանց ԲՇԽ-ի նիստ հրավիրելու՝ էլեկտրոնային եղանակով: Սույն դեպքում որոշման նախագիծը պետք է շրջանառվի որոշումը ընդունելու օրվանից առնվազն 7 աշխատանքային

օր առաջ: Նշված ժամանակահատվածում ներկայացված որոշման նախագծի վերաբերյալ ԲՇԽ-ի անդամների կողմից կարծիք չներկայացվելու դեպքում, այն համարվում է դրական: էլեկտրոնային եղանակով կայացված որոշումների վերաբերյալ կազմվում է էլեկտրոնային եղանակով կայացված որոշումների վերաբերյալ տեղեկանք,որը 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է:

37. ԲՇԽ-ի որևէ խմբակցության անդամների 2/3-ի պահանջով՝ նախագահը պարտավոր է հրավիրել ԲՇԽ-ի արտահերթ նիստ: Արտահերթ նիստը հրավիրվում է դրա պահանջի ներկայացումից հետո մեկամսյա ժամկետում:

38. ԲՇԽ-ի որևէ խմբակցության անդամների 2/3-ի պահանջով ԲՇԽ-ի արտահերթ նիստ հրավիրելու դեպքում՝ սույն աշխատակարգով սահմանված ժամկետներում արտահերթ նիստ պահանջած խմբակցությունը ներկայացնում է նիստի օրակարգը և համապատասխան փաստաթղթերը:

39. ԲՇԽ-ի նիստերի ժամանակ խմբակցությունները կարող են պահանջել 10 րոպե տևողությամբ ընդմիջում՝ խմբակցության ներսում քննարկվող հարցի վերաբերյալ խորհրդակցություն անցկացնելու նպատակով:

40. ԲՇԽ-ի անդամի՝ ԲՇԽ-ի աշխատանքներին մասնակցելու անհնարինության կամ մեկ տարվա ընթացքում ԲՇԽ-ի նիստերի ավելի քան կեսից անհարգելի բացակայելու դեպքում՝ նախագահը վերջինիս փոխարինման հարցը ներկայացնում է ԲՇԽ-ի քննարկմանը:

41. Անհրաժեշտության դեպքում ԲՇԽ-ի նախագահը և խմբակցությունները ԲՇԽ-ի նիստերին կարող են հրավիրել դիտորդներ և փորձագետներ: ԲՇԽ-ի նիստերին մասնակցելու համար փորձագետների և դիտորդների թեկնածությունը նախագահին պետք է ներկայացվի ԲՇԽ-ի նիստից առնվազն 4 աշխատանքային օր առաջ: Թեկնածությունը ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում նախագահը հաստատում կամ մերժում է նրանց մասնակցությունը ԲՇԽ-ի նիստին:

42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի որոշումները հրապարակվում են արձանագրությունների միջոցով:

43. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի արձանագրության նախագիծը նիստից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամներին՝ համաձայնեցման: ԲՇԽ-ի անդամներն իրենց առարկություններն ու առաջարկությունները ներկայացնում են 5 աշխատանքային օրվա ընթացքում: Առարկությունների բացակայության դեպքում ԲՇԽ-ի նիստի արձանագրությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում: Եթե ԲՇԽ-ի անդամների կողմից ԲՇԽ-ի նիստի արձանագրության նախագծի վերաբերյալ ներկայացվել են առարկություններ և առաջարկություններ, դրանք քննարկում են և 5 աշխատանքային օրվա

ընթացքում լրամշակված արձանագրությունը հրապարակվում է ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում:

44. ԲՇԽ-ի նիստի արձանագրության մեջ նշվում է՝

1) նիստի անցկացման վայրը, օրը, նիստն սկսելու և ավարտելու ժամերը.
2) նիստի օրակարգը.
3) նիստին ներկա և բացակա մասնակիցների ցանկը, այդ թվում բացակայության հիմնավորումները, եթե այդպիսիք կան.
4) քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները.
5) նիստի մասնակիցների առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.
6) նիստին ներկայացված փաստաթղթերի ցանկը.
7) ընդունված որոշումները՝ ներառյալ տվյալ որոշման վերաբերյալ քվեարկության արդյունքները.
8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

45. Արձանագրության մեջ նիստի ժամանակ արտահայտված կարծիքները (առաջարկները, դիտողությունները, ելույթները) ներկայացվում են ըստ համապատասխան խմբակցությունների: Բացառություններ կարող են կատարվել մասնակիցների խնդրանքով:

46. ԲՇԽ-ի նիստերը ձայնագրվում են, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում Խորհրդի նիստի արձանագրության մեջ: ԲՇԽ-ի արձանագրությունները համարվում են պաշտոնական փաստաթղթեր:

## VII. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

47. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն որոշումներն ընդունում է՝ խմբակցությունների ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) հիման վրա:

48. Որոշման վերաբերյալ ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) բացակայության դեպքում՝ որոշումը քննարկվում է ԲՇԽ-ի անդամների հետ միջնորդի միջոցով:

49. ԲՇԽ-ի խմբակցությունները ԲՇԽ-ի նիստի ժամանակ կամ նիստից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են միջնորդների թեկնածությունը և ԲՇԽ-ի խմբակցությունների ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) ընտրում են միջնորդին:

50. Միջնորդը 1 ամսյա ժամկետում վիճելի որոշման շուրջ քննարկումներ է կազմակերպում ԲՇԽ-ի խմբակցությունների հետ՝ որոշման վերաբերյալ ԲՇԽ-ի խմբակցությունների ընդհանուր համաձայնությունը (կոնսենսուսը) ապահովելու նպատակով:

51. Միջնորդը պետք է հավասարապես հասանելի լինի բոլոր խմբակցությունների համար և ապահովի, որ ԲՇԽ-ի բոլոր խմբակցությունների տեսակետները հավասարապես հաշվի առնվեն քննարումների ընթացքում:

52. Միջնորդի նշանակումից առնվազն 30 աշխատանքային օր հետո սույն աշխատակարգով սահմանված կարգով հրավիրվում է ԲՇԽ-ի նիստ՝ որոշումը երկրոդ անգամ քննարկելու և ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ ընդունելու համար:

53. Եթե երկրորդ անգամ ևս ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) չի գալիս, նիստի ընթացքում որոշումն ընդունելու համար կազմակերպվում է քվեարկություն:

54. ԲՇԽ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

55. Քվեարկությունը կատարվում է բաց՝ ԲՇԽ-ի անդամների ձեռք բարձրացնելու միջոցով:

56. Որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցության անդամների 2/3-ը:

57. Քվեարկության արդյունքները գրանցվում են: Եթե ԲՇԽ-ի որևէ անդամ ընդունված որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա այն գրավոր կցվում է ԲՇԽ-ի որոշմանը և ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի արձանագրությանը:

## VIII. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ ԵՎ ԲՇԽ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

58. ՀՀ ԱՃԹՆ-ի համար գործում են ԱՃԹՆ-ի ասոցիացիայի վարվեցողության կանոնները, եթե սույն աշխատակարգով այլ կանոններ սահմանված չեն:

59. Ի հավելումն ԱՃԹՆ-ի ասոցիացիայի վարվեցողության կանոների՝ ԲՇԽ-ի նիստերի բոլոր մասնակիցները, այդ թվում՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամները, այլընտրանքային անդամները, ՀՀ ԱՃԹՆ-ի փորձագետները, հրավիրված փորձագետները և դիտորդները մինչև նիստի օրը պետք է գրավոր հայտարարեն ԱՃԹՆ-ի ասոցիացիայի վարվեցողության կանոներով սահմանված՝ շահերի բախման մասին:

60. ԲՇԽ-ի անդամները պարտավոր են հարգել քննարկվող հարցերի շուրջ մասնակիցների տեսակետները:

61. ԲՇԽ-ի նիստերի բոլոր մասնակիցները, մասնավորապես՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամները, այլընտրանքային անդամները, փորձագետները, դիտորդները և ՀՀ ԱՃԹՆ-ի փորձագետները պարտավոր են ԲՇԽ-ի նիստերից դուրս չքննարկել ու չտարածել ԲՇԽ-ի նիստերի ժամանակ քննարկված գաղտնի

կամ զգայուն տեղեկությունը: Գաղտնի և զգայուն տեղեկության շրջանակները սահմանվում են ԲՇԽ-ի նիստի ժամանակ:

## IX. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

62. Սույն աշխատակարգը հրապարակվում է ընդունումից 3 աշխատանքային օրվա ընթացքում և ուժի մեջ է մտնում հրապարակումից հետո: